# Գենդերային կարծրատիպերի եւ սեռականության դեմ պայքարը կրթության մեջ եւ դրա միջոցով

Եվրոպայի խորհրդի՝ գենդերային հավասարության ռազմավարություն

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

> Աղջիկն օժտված է իր կյանքում առաջ գնալու կարողությամբ: Նա միայն մայր չէ, նա միայն քույր չէ, նա միայն կին չէ: Նա պետք է ունենա ինքնություն Նրան պետք է ընդունեն, եւ նա պետք է ունենա տղային հավասար իրավունքներ:

Մալալա Յուսաֆզայ՝ կանանց իրավունքների ակտիվիստ, երեխաների հարցերով զբաղվող ակտիվիստ, Խաղաղության Նոբելյան մրցանակի 2014 թվականի հաղթող

## Գենդերային հավասարություն

Գենդերային հավասարություն նշանակում է երկու սեռերի հավասար տեսանելիություն, իրավազորում, պատասխանատվություն եւ մասնակցություն հանրային ու մասնավոր կյանքի բոլոր բնագավառներում: Գենդերային հավասարության հասնելն ունի կենտրոնական դեր մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության զարգացման, օրենքի գերակայության նկատմամբ՝ հարգանքի եւ տնտեսական աճի ու մրցունակության համար:

## Գենդերային կարծրատիպեր

Գենդերային կարծրատիպերն ընդհանրացված կամ կանխակալ գաղափարներ են, որոնց համաձայն անհատները դասակարգվում են գենդերային կոնկրետ խմբերի, որոնք սովորաբար սահմանվում են որպես «կանայք» եւ «տղամարդիկ», ինչպես նաեւ կամայականորեն վերագրված բնութագրեր ու դերեր են՝ որոշված եւ սահմանափակված նրանց սեռով: Կարծրատիպերը համարվում են եւ՝ նկարագրական այն առումով, որ որոշակի խմբի անդամներ ընկալվում են որպես միեւնույն հատկանիշներով օժտված անձինք՝ անկախ անհատական տարբերություններից, եւ՝ նորմատիվային այն առումով, որ դրանցով սահմանվում են հարաչափեր այն ամենի համար, ինչը հասարակությունը համարում է ընդունելի վարքագիծ: Կարծրատիպավորումը դառնում է խնդրահարույց, երբ այն օգտագործվում է որպես կանանց նվաստացնելու եւ նրանց նկատմամբ խտրականություն դրսեւորելու գործիք: Գենդերային բացասական կարծրատիպերը վերացնելն էական նշանակություն ունի գենդերային հավասարության հասնելու համար, եւ մանկավարժները կենտրոնական դեր են խաղում այս փոփոխությունը խթանելու հարցում:



## Գենդերային անհավասարություններ

Գենդերային անհավասարությունները Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կրթական համակարգերի կայուն հատկանիշն են: Գենդերային կարծրատիպավորումը շարունակում է ազդեցություն գործել դպրոցների անձնակազմի վարքագծի եւ գործելակերպի վրա՝ չնայած ազգային կառավարությունների կողմից հավասարության վերաբերյալ ընդունված օրենսդրությանը, քաղաքականությանը, ստանձնած միջազգային հանձնառություններին եւ դրանց նախաձեռնություններին: Դպրոցները հակված են կրթելու այնպիսի եղանակներով, որոնք համապատասխանում են գենդերային կարծրատիպերին, եւ դպրոցներում կրթական միջավայրի զգալի հատվածը չի խրախուսում աշակերտներին ընտրել առարկաներն այնպիսի եղանակներով, որոնք գենդերային առումով չեզոք են: Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եվրոպական երկրներում օգտագործվող դպրոցական դասագրքերի մեծ մասը ներառում է այնպիսի պատմվածքներ ու պատկերներ, որոնք արտացոլում են կանանց եւ տղամարդկանց, աղջիկների եւ տղաների դերի եւ գործունեության վերաբերյալ կարծրատիպավորված պատկերացումներ: Դեռեւս տղամարդիկ առավել հաճախ են ներկայացված, քան կանայք. բառապաշարը հակասում է գենդերային հավասարության սկզբունքին, իսկ գլխավոր հերոսները հիմնականում պատկանում են արական սեռին:

Միեւնույն ժամանակ կրթությունն ունի հասարակական արժեքները խթանելու եւ կարծիքներ ձեւավորելու հսկայական ներուժ. ուրեմն, ինչու՞ չօգտագործել այն ի օգուտ գենդերային հավասարության: Կրթական համակարգն արտոնյալ դիրք է զբաղեցնում իրավիճակն արմատապես փոխելու հարցում, աղջիկների եւ տղաների, կանանց եւ տղամարդկանց մտածելակերպը փոխելու հարցում, ինչպես նաեւ գենդերային դերերի մասին կանխակալ գաղափարներ փոխանցելուց խուսափելու միջոցով աղջիկներին ու տղաներին իրենց իրական եւ ամբողջական ներուժը կյանքի կոչելու հնարավորություն տալու նպատակով որոշիչ դերակատարում ունենալու հարցում:

## Եվրոպայի խորհրդի չափանիշներն օգտագործելը կրթության մեջ եւ դրա միջոցով՝ գենդերային կարծրատիպերն արմատախիլ անելու համար, նշանակում է՝

- միջոցների խթանում եւ խրախուսում՝ ուղղված կրթական համակարգի բոլոր մակարդակներում եւ ուսուցիչների կրթության մեջ գենդերային հավասարության խնդրին ցուցաբերվող համալիր մոտեցումը կիրարկելուն.
- անդրադարձ գենդերային կարծրատիպերին՝ դպրոցների քաղաքականության մեջ եւ գործելակերպերում.

- ոչ ֆորմալ կրթության օգտագործում՝ գենդերային կարծրատիպերի դեմ պայքարելու համար.
- կրթության դերի խթանում՝ սեռականությունը, այդ թվում՝ սեռականության նոր դրսեւորումները, կիբեռահաբեկման ենթարկելը, կիբեռկնատյացությունը եւ սեքսուալ բովանդակությամբ հաղորդագրություններ ուղարկելը վկայակոչելու հարցում.
- կանանց եւ աղջիկների նկատմամբ բռնության կանխարգելում:

Եվրոպայի խորհուրդը՝ որպես ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը եւ մարդու իրավունքները պաշտպանելու ու խթանելու համար ստեղծված կազմակերպություն, խթանում է բարձրորակ եւ ոչ կարծրատիպավորված կրթությունը կրթական համակարգի բոլոր մակարդակներում: Անդամ պետությունների կողմից որպես գենդերային կարծրատիպերից զուրկ կրթության չափանիշները բավարարելու ուղղությամբ առաջընթացը գնահատելու ուղենիշներ կարող են օգտագործվել հետեւյալ չափորոշիչները

- «Կրթության մեջ գենդերային հավասարության խնդրին ցուցաբերվող համալիր մոտեցման վերաբերյալ» Նախարարների կոմիտեի հանձնարարականով (CM/Rec(2007)13) առաջ են քաշվում մի շարք համապարփակ միջոցներ, որոնք անդամ պետությունները պետք է ձեռնարկեն՝ կրթության մեջ գենդերային հավասարության խնդրին ցուցաբերվող արդյունավետ համալիր մոտեցումն ապահովելու համար: Դրանք ներառում են իրավական դաշտ, դպրոցների կառավարում եւ դպրոցների կազմակերպում, նախնական եւ ծառայության ընթացքում իրականացվող կրթություն եւ վերապատրաստում ուսուցիչների եւ վերապատրաստողների համար, դասընթացների ծրագրեր, դպրոցական ուսումնական ծրագրեր, առարկաներ եւ քննություններ, ուսումնական նյութեր, դասավանդման մեթոդներ եւ գործելակերպեր, կրթություն՝ ուղղված ժողովրդավարական քաղաքացիությանը եւ մարդու իրավունքներին, կրթական եւ մասնագիտական կողմնորոշում, սեռականության մասով բռնության կանխարգելում եւ դրա դեմ պայքար, խոցելի խմբեր, լրատվամիջոցներ եւ գենդերային ու կրթական հարցերի վերաբերյալ հետազոտություն: Հանձնարարականով նաեւ կոչ է արվում իրականացնել վերոնշյալ միջոցների կենսագործման պարբերաբար դիտանցում:
- «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման ու դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցիա, ԵԽՊՇ թիվ 210 (2011))՝ պարտադիր իրավական ուժ ունեցող պայմանագիրը, պարունակում է մի քանի դրույթ՝ կապված գենդերային կարծրատիպերի ու սեռականության՝ որպես այնպիսի գործոնների հետ, որոնց վրա հիմնված են կանանց եւ տղամարդկանց միջեւ անհավասարությունը բոլոր տիրույթներում, այդ թվում՝ կրթության մեջ: Կոնվենցիայով պահանջվում է գենդերային հավասարության,

միջանձնային հարաբերություններում փոխադարձ հարգանքի եւ բռնության արգելքի հնարավորինս վաղ խրախուսում: Դրանով ընդգծվում է կրթական հաստատությունների կարեւոր դերն այդ արժեքների խթանումն ամրապնդելու հարցում: Կոնվենցիայով ընդլայնվում է կանանց եւ տղամարդկանց միջեւ հավասարության, ոչ կարծրատիպավորված գենդերային դերերի, միջանձնային հարաբերություններում փոխադարձ հարգանքի եւ ոչ բռնի եղանակով վեճերի լուծման սկզբունքները խթանելու պարտավորությունը բոլոր ոչ ֆորմալ կրթական հաստատություններում, ինչպես նաեւ սպորտի բնագավառում, մշակութային եւ հանգստի ապահովման հաստատություններում ու լրատվամիջոցներում: Կոնվենցիայով Կողմ պետություններից պահանջվում է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր այնպիսի խնդիրների վերաբերյալ ուսումնական նյութերը ֆորմալ կրթական ծրագրերում եւ բոլոր մակարդակներում ներառելու համար, ինչպիսիք են ոչ կարծրատիպավորված գենդերային դերերը եւ կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնությունը:

## Պատշաճ գործելակերպերը

Եվրոպայի խորհուրդը կազմել է գործունեության այնպիսի տեսակների օրինակների ժողովածու, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ պետություններն իրականացնում են գենդերային կարծրատիպերից զուրկ կրթությունը խրախուսելու համար: Ժողովածուն սահմանում է նաեւ «Կրթության մեջ գենդերային հավասարության խնդրին ցուցաբերվող համալիր մոտեցման վերաբերյալ» Նախարարների կոմիտեի հանձնարարականում ներառված միջոցներն իրականացնելու եղանակները: Այդ լավագույն գործելակերպերից որոշները ներառում են՝

- ԳՏՃՄ (գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն, մաթեմատիկա) առարկաների խթանում աղջիկների շրջանում.
- արշավներ՝ ուղղված աղջիկներին եւ կանանց իրազեկելուն եւ ոչ կարծրատիպային մասնագիտություն ընտրելը շահագրգռելուն.
- գենդերային հավասարության վերաբերյալ վերապատրաստման ծրագրեր ուսուցիչների համար.
- դասագրքերի եւ ուսումնական նյութերի՝ գենդերային հարցերի տեսանկյունից սրբագրում.
- գենդերային հարցերի մասով իրազեկ դպրոցական մշակույթի եւ գենդերային հավասարության նկատմամբ համադպրոցական մոտեցման ստեղծում.
- նախաձեռնություններ՝ ուղղված գենդերային հարցերի մասով ծնողների իրազեկվածությունը բարձրացնելուն.
- վաղ մանկական տարիքի կրթության եւ խնամքի մեջ ներգրավված տղամարդկանց թիվն ավելացնելուն ուղղված միջոցներ.
- գործընկերների հետ արդյունավետ փոխգործակցություն՝ գենդերային հավասարության հարցերով.
- ֆինանսական օժանդակության տրամադրում ընտանիքներին՝ աղջիկների դպրոց հաճախելուն օժանդակելու համար:

PREMS 011920 – Photos: shutterstock – Pavel L Photo and Video / Shutterstock.com

www.coe.int/equality
gender.equality@coe.int

HYE

**www.coe.int**

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, այդ թվում Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE